24513

ՊՐՈՖՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ՈՐԳԱՆՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՅԵՎ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀԱՄԿԽ-Ի 8-ՐԴ ՊԼԵՆՈՒՄԻ ՎՈՐՈՇՈՒՄԸ

331.88
Հ-21

ՊԵՏՀՐԱՏԻ ՏՊԱՐԱՆ ԵՐԵՎԱՆ 1939

05 JAN 2010

331.88
Հ-21

ՊՐՈՖՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ՈՐԳԱՆՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՅԵՎ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀԱՄԿԽ-Ի 8-ՐԴ ՊԼԵՆՈՒՄԻ ՎՈՐՈՇՈՒՄԸ

ՊԵՏՀՐԱՏԻ ՏՊԱՐԱՆ ՅԵՐԵՎԱՆ 1939

01 JUN 2013

24513

2988
39

Գլավլիտ լիազոր Դ—1206
Պատվեր № 470
Տիրաժ 500

Գրքեցարներ բոլոր յերկրների, միացե՛ք։

ՀԱՄԿԽ-Ի 8-ՐԴ ՊԼԵՆՈՒՄԻ ՎՈՐՈՇՈՒՄԸ

«Ի՞նչ է նշանակում ճիշտ ընտրել աշխատողներին և նրանց ճիշտ դասավորել աշխատանքի մեջ:

Այդ նշանակում է աշխատողներին ընտրել նախ քաղաքական հատկանիշով, այսինքն նրանք արժանի՞ յեն արդյոք քաղաքական վստահության և յերկրորդ՝ գործնական հատկանիշով, այսինքն նրանք պիտանի՞ յեն արդյոք այսինչ կոնկրետ աշխատանքի համար»:

ՍՏԱԼԻՆ

1. Պրոֆմիութենական մարմինների ընտրություն-ներն անցկացնելիս անհրաժեշտ է խստորեն ղեկա-վարվել ՀԱՄԿԽ-ի 6-րդ պլենումի 1937 թ. մայիսի 15-ի հետևյալ վորոշումով.

«Պրոֆմիությունների ընտրությունների ժամանակ արգելել ցուցակով քվեարկելը: Քվեարկումը կատա-րել ըստ առանձին թեկնածուների և ապահովել պրոֆ-միությունների բոլոր անդամների համար անսահման իրավունք թեկնածուներին բացարկելու և նրանց քն-նադատելու վերաբերյալ:

Սահմանել պրոֆմիութենական մարմինների ընտ-րությունների ժամանակ թեկնածուների (փակ) գաղտ-նի քվեարկություն»:

2. Փակ գաղտնի քվեարկությամբ ընտրվում են՝

ա) Ցեխային-գործարանային և տեղական կոմի-տեների անդամները, ցեխային կոմիտեների անդամ-ները, պրոֆմիութենական խմբակների կազմակեր-պիչները (պրոֆկազմակերպիչները):

բ) Պրոֆմիությունների շրջանային, քաղաքային, մարզային, յերկրային, հանրապետական կոնֆերանս-ների, և համագումարի պատգամավորները:

գ) Պրոֆմիությունների շրջանային, քաղաքային, յերկրային, մարզային, հանրապետական և կենտրո-նական կոմիտեների անդամները:

դ) Համապատասխան պրոֆմիութիւնների վերստուգիչ հանձնաժողովների անդամները։

3. Բաց քվեարկութեամբ համապատասխան կոմիտեների պլենումներում ընտրվում են՝

ա) Ֆաբրիկա-գործարանային և տեղական կոմիտեների նախագահներն ու նախագահների տեղակալները և ցեխային կոմիտեների նախագահները։

բ) Պրոֆեսիոնալ միութիւնների շրջանային, քաղաքային, մարզային, յերկրային, հանրապետական և կենտրոնական կոմիտեների նախագահներն ու քարտուղարները։

գ) Պրոֆմիութիւնների շրջանային, քաղաքային, մարզային, յերկրային, հանրապետական և կենտրոնական կոմիտեների նախագահութեան անդամները։

դ) Վերստուգիչ հանձնաժողովների նախագահները վերստուգիչ հանձնաժողովի նիստերում։

4. Պրոֆմիութենական մարմինների ընտրութիւնները ձեռնարկութիւններում, հիմնարկութիւններում, ուսումնական հիմնարկներում անց են կացվում հետևյալ կարգով— նախ ընտրվում են ֆաբրիկա գործարանային և տեղական կոմիտեները, վերստուգիչ հանձնաժողովներ, ապա՝ ցեխային կոմիտեներն ու պրոֆ խմբակի կազմակերպիչները։

5. Հաշվետու ընտրական ժողովները ձեռնարկութիւններում, հիմնարկութիւններում և ուսումնական հաստատութիւններում անցկացնելու ամբողջ նախապատրաստական աշխատանքը դրվում է ֆաբրիկա-գործարանային և տեղական կոմիտեների վրա։

Ֆաբրիկա-գործարանային և տեղական կոմիտեները վաղ ուշ քան 10 որ առաջ մինչև հաշվետու վերընտրական ժողովը իրազեկ են դարձնում պրոֆմիութեան անդամներին՝ հաշվետու ընտրական ժողովն անցկացնելու պլանի մասին։

Հաշվետու ընտրական ժողովը բացվում է համապատասխան պրոֆ-մարմնի ներկայացուցչի կողմից, այսինքն ձեռնարկութեան պրոֆմիութեան անդամների ընդհանուր ժողովը բաց է անում ֆաբրիկա-գործարանային կոմիտեի ներկայացուցիչը, ցեխային ժողովը ցեխային կոմիտեի ներկայացուցիչը, պրոֆմիութեան խմբակի ժողովը—պրոֆխմակի կազմակերպիչը։

Հաշվետու ընտրական ժողովը ղեկավարելու համար ընտրվում է նախագահութիւն՝ բաց քվեարկութեամբ։

Նախագահութեան անդամների թիվը սահմանում է ինքը ժողովը։ Նախագահութեան կազմի թեկնածուներն առաջադրվում են անմիջապես ժողովի կողմից։

Նախագահութեան կազմի համար թեկնածու առաջադրել ցանկացող պրոֆմիութեան անդամին, ժո-

ղովը բաց անող համապատասխան պրոֆմարմնի ներկայացուցիչը տրամադրում է խոսքը՝ նախագահության անձնական կազմի մասին առաջարկ անելու համար:

6. Ֆաբրիկա-գործարանային և տեղական կոմիտեների հաշվետվություններն ու ընտրությունները կատարվում են ձեռնարկությունների— հաստատությունների և ուսումնական հիմնարկությունների պրոֆմիությունների անդամների ընդհանուր ժողովներում: Արգելվում է հաշվետվություններն ու ընտրությունները կատարել ընդհանուր գործարանային ժողովներում, հիմնարկային կոնֆերենցիաներում:

Այն դեպքերում, վորտեղ ըստ արտադրության պայմանների (խոշոր ձեռնարկություններ, արտադրության անընդհատությունը, բազմահերթափոխությունը) անհնար է հրավիրել պրոֆմիության անդամների ընդհանուր ժողով, թույլատրվում է յուրաքանչյուր առանձին դեպքում, պրոֆմիության համապատասխան կենտրոնական կոմիտեից թույլատվություն ստանալուց հետո, ընդհանուր գործարանային կոմիտեի հաշվետվություններն ու ընտրությունները կատարել հերթային կամ ցեխային ժողովներում:

Այդ դեպքում ընդհանուր գործարանային և տեղական կոմիտեների թեկնածուները առաջադրվում են յուրաքանչյուր ընտրական ժողովում (հերթային կամ ցեխային), վորից հետո ֆաբրիկա-գործարանային կոմիտեն կազմում է հերթային և ցեխային ժողովներում առաջադրված բոլոր թեկնածուների համագործարանային ցուցակ և կրկին անգամ առաջարկում է քննարկել այն վորպես համագործարանային ցուցակ. այս քննարկումից հետո կազմվում է բոլոր թեկնածուների վերջնական ցուցակ, բոլոր հերթային և ցեխային ժողովներում դաղտնի կերպով քվեարկելու համար:

Այն ձեռնարկություններում վորտեղ աշխատում են պրոֆմիության 5000 և ավելի անդամներ, հաշվետվությունները քննարկելուց և վորոշում ընդունելուց հետո ցեխային կամ հերթային ժողովը բաց քվեարկությամբ ընտրում է լիազոր անձեր, պրոֆմիության 50 անդամից մի հոգի:

Ֆաբրիկա-գործարանային կոմիտեն հրավիրում է լիազորների խորհրդակցություն: Լիազորների խորհրդակցությունը քննարկում է ֆաբրիկա-գործարանային կոմիտեի կազմի թեկնածությունները և յուրաքանչյուրին առանձին հանձնարարում է ցեխային կամ հերթային ժողովին, ցեխային կամ հերթային ժողովներում քննարկելուց հետո ֆաբրիկա-գործարանային կոմիտեն կազմում է թեկնածուների

ցուցակ դաղտնի քվեարկություն կատարելու համար:

Ցեխային կոմիտեների հաշվետվություններն ու ընտրությունները կատարվում են պրոֆմիության անդամների ընդհանուր ցեխային ժողովներում: Այն դեպքերում, երբ արտադրության պայմանների համաձայն հնարավոր չէ հրավիրել պրոֆմիության անդամների ընդհանուր ցեխային ժողով, ֆաբրիկա-գործարանային և տեղական կոմիտեների թույլտվությամբ կարելի է հրավիրել պրոֆմիության անդամների ժողովներ ըստ հերթերի:

Խմբակային պրոֆկազմակերպիչների հաշվետվություններն ու ընտրությունները կատարվում են պրոֆմիության անդամների համապատասխան խմբակային ժողովներում:

Պրոֆմիության անդամների հաշվետու-ընտրական ժողովները համարվում են իրավազոր այն դեպքում, երբ այդ ժողովներին ներկա են լինում ձեռնարկություններում և հիմնարկություններում ընտրությունների շրջանում աշխատող (ցուցակային կազմ) պրոֆմիության անդամների առնվազն 2/3-ը:

7. Պրոֆմիութենական մարմինների ընտրությունները կատարվում են ժողովի, կոնֆերենցիայի և համագումարի կողմից միության համապատասխան կոմիտեների ու վերստուգիչ հանձնաժողովների հաշվետու զեկուցումը լսելուց, քննարկելուց և նրա վերաբերյալ վորոշում ընդունելուց հետո:

8. Ֆաբրիկա-գործարանային (տեղական) կոմիտեի հաշվետվության քննարկումն ավարտուց և հաշվետվության վերաբերյալ բանաձև ընդունելուց հետո, ընդհանուր ժողովը, կոնֆերենցիան, համագումարը սահմանում են միության համապատասխան կոմիտեի, վերստուգիչ հանձնաժողովի նոր կազմի անդամների թիվը զեկավարվելով ֆաբրիկա-գործարանային, տեղական, շրջանային և մարզային կոմիտեների նկատմամբ միության Կենտկոմի դիրեկտիվով, իսկ միության կենտկոմի նկատմամբ ՀԱՄԿՄ-ի դիրեկտիվով:

9. Պրոֆմիության մարմնի նոր կազմի համար թեկնածությունները առաջադրվում են ընտրական ժողովում:

Պրոֆմիության մարմնի կազմի համար այս կամ այն թեկնածությունն առաջադրել ցանկացող պրոֆմիության յուրաքանչյուր անդամին ժողովի նախագահությունը տրամադրում է խոսք՝ թեկնածություններ առաջարկելու և իր առաջարկը հիմնավորելու համար:

Համապատասխան պրոֆմարմնի համար թեկնածությունների առաջադրումը դադարեցնելու մասին առաջարկություն ստանալու դեպքում ժողովի նախագահությունը այդ առաջարկությունը դնում է ընդ-

հանուր ժողովի, կոնֆերենցիայի կամ համագումարի լուծման և պրոֆմիության ընտրվելիք մարմնի նոր թեկնածությունների առաջարկման հարցի չարունակումը կամ դադարեցումը լուծում է բաց քվեարկությամբ:

Թեկնածությունների քվերակումը կատարվում է անհատական կարգով: Թեկնածություններն անհատական կարգով քննարկելու ժամանակ պետք է ապահովվի անսահման իրավունք՝ պրոֆմարմնի կազմի համար առաջադրված թեկնածությունների դեմ բացարկ հայտնելու վերաբերյալ, այսինքն ժողովի յուրաքանչյուր մասնակիցը կարող է բացարկել առաջադրված թեկնածությունների ամեն մի քանակ և առաջադրված ամեն մի թեկնածության վերաբերյալ պրոֆմիության անդամների անսահման քանակություն կարող է արտահայտվել ինչպես «թեր» նույնպես և «դեմ»:

Այս կամ այն թեկնածության վերաբերյալ քննարկումը դադարեցնելու մասին առաջարկներ ստանալու դեպքում ժողովի նախագահությունը այդ հարցը առաջադրում է ընդհանուր ժողովին, կոնֆերենցիային, համագումարին, քննելու լուծելու համար, տվյալ թեկնածության քննարկման դադարեցման կամ չարունակման հարցը լուծվում է բաց քվեարկությամբ:

10. Բացարկված թեկնածությունները քննարկելուց հետո անհրաժեշտ է յուրաքանչյուր առանձին դեպքում բաց քվեարկության կարգով լուծել տվյալ թեկնածությունը այն ցուցակի մեջ մտցնելու կամ չմտցնելու հարցը, վորը կազմվում է պրոֆմիության մարմնի ընտրությունը փակ (գաղտնի) քվեարկությամբ անցկացնելու համար: Այս դեպքում անհրաժեշտ է հաշվել ինչպես «բացարկի համար» նույնպես և «բացարկի դեմ» տրված բոլոր ձայները:

Չբացարկված թեկնածությունների նկատմամբ բաց քվեարկություն չի կատարվում, և այս թեկնածությունները մտցվում են ցուցակի մեջ ընտրությունները փակ (գաղտնի) քվեարկությամբ անցկացնելու համար:

Թեկնածությունները ժողովներում, կոնֆերենցիաներում և համագումարում քննարկելուց հետո փակ (գաղտնի) քվեարկության ներկայացրած ցուցակների ճշտության համար պատասխանատու է ժողովի, կանֆերենցիայի, համագումարի նախագահությունը: Նախագահությունը պարտավոր է մանրադնին կերպով ստուգել կազմված ցուցակի ճշտությունը:

Փակ (գաղտնի) քվեարկության համար առաջադրված ցուցակները չպետք է ոգտագործվեն պրոֆմիության քվեարկող անդամների կողմից:

11. Փակ (գաղտնի) քվեարկությունն անցկացնե-

լուց առաջ պրոֆմիության անդամների ընդհանուր ժողովը, կոնֆերենցիան, համագումարը բաց քվեարկությամբ ընտրում է հաշվիչ հանձնաժողով՝ փակ (գաղտնի) քվեարկության արդյունքներն ամփոփելու համար:

Հաշվիչ հանձնաժողովի անդամների թիվը սահմանում է ընդհանուր ժողովը, կոնֆերենցիան, համագումարը: Հաշվիչ հանձնաժողովի անդամները ընտրում են հաշվիչ հանձնաժողովի նախագահ:

Այն ձեռնարկություններում և հիմնարկություններում, ուր համաքաղաքային պրոֆմարմինների ընտրությունները կատարվում են ցեխային և հերթային ժողովներում, համագործարանային հաշվիչ հանձնաժողովը կազմվում է պրոֆմիության անդամների ցեխային և հերթային ժողովներում ընտրված հաշվիչ հանձնաժողովների ներկայացուցիչներից:

Այդ դեպքերում հաշվիչ հանձնաժողովի անդամների ընդհանուր թիվը և այդ հանձնաժողովի մեջ յուրաքանչյուր ցեխից կամ հերթից մտնող ներկայացուցիչների թիվը սահմանվում է ֆաբրիկա-գործարանային կամ տեղական կոմիտեի կողմից:

Քվեարկությունից առաջ հաշվիչ հանձնաժողովի նախագահ (իսկ այն ձեռնարկություններում, որտեղ ընտրությունները կատարվում են ցեխային-հերթային ժողովներում, հաշվիչ հանձնաժողովի անդամը) պար-

տավոր է բացատրել պրոֆմիության անդամների ժողովին, կոնֆերենցիայի, համագումարի պատգամավորներին, փակ (գաղտնի) քվեարկություն կատարելու կարգը:

Հաշվիչ հանձնաժողովը պարտավոր է փակ (գաղտնի) քվեարկությունից առաջ պատրաստել ընտրական արկղներ և անձամբ նրանք կնքել կամ փակել:

12. Հաշվիչ հանձնաժողովը տալիս է ընտրական ժողովի, կոնֆերենցիայի, համագումարի մասնակցին, վերջնիս կողմից պրոֆտոմսը կամ պատգամավորական մանդատը ներկայացնելուց հետո, մեկական որինակ այն ցուցակներից, որոնց մեջ նշված են պրոֆմարմինների նոր կազմի համար նախատեսված թեկնածությունները և նշում է այդ ցուցակներում կամ մանդատներում այն մասին, որ պրոֆմիության անդամը մասնակցել է քվեարկությանը:

13. Փակ (գաղտնի) քվեարկությանը մասնակցում են միայն պրոֆմիության անդամները:

Միության յուրաքանչյուր անդամ փակ (գաղտնի) քվեարկության ժամանակ իրավունք ունի ընտրել առանձին թեկնածություններ և ավելացնել պրոֆմարմնի կազմի մեջ նոր թեկնածություններ, անկախ նրանից, թե ժողովը, կոնֆերենցիան, հա-

մաղումարը ինչ քանակությամբ է վորոշել ընտրել պրոֆ-մարմինների նոր կազմը:

14· Քվեարկությունից հետո հաշվիչ հանձնաժողովը բաց է անում ընտրական արկղները և այդ նպատակի համար հատկացված առանձին շենքում ամփոփում է քվեարկության արդյունքները:

Հաշվիչ հանձնաժողովը պարտավոր է հանրադումարի բերել բոլոր թեկնածուների համար տրված «թեր» և «դեմ» ձայները, յուրաքանչյուր թեկնածուի համար առանձին:

Ձայները հանրադումարի բերելուց հետո հաշվիչ հանձնաժողովը կազմում է արձանագրություն, վորի մեջ գրանցում է յուրաքանչյուր թեկնածուի համար տրված քվեարկության արդյունքները առանձին-առանձին, և հանձնաժողովի բոլոր անդամները ստորագրում են այդ արձանագրությունը:

Այն շենքը, վորտեղ հանրադումարի յեն բերվում քվեարկության արդյունքները, վոչ վոք իրավունք չունի մտնելու կամ դտնվելու, բացի հաշվիչ հանձնաժողովի անդամներից:

15· Հաշվիչ հանձնաժողովն ընտրական ժողովին, կոնֆերենցիային, համադումարին զեկուցում է քվեարկության արդյունքների մասին յուրաքանչյուր թեկնածուի համար առանձին-առանձին:

Պրոֆմարմնի կազմում ընտրված են համարվում

այն թեկնածուները, վորոնք ստացել են ձայների մեծամասնություն, բայց վոչ պակաս ընտրական ժողովի, կոնֆերենցիայի, համադումարի մասնակցողների ձայների կիսից:

16· Թեկնածությունների վակ (դաղտնի) քվեարկության ամբողջ նյութերը (դրավոր հայտարարությունները, ձայների հանրադումարները, թեկնածությունների ցուցակները) և այն պետք է պահվի համապատասխան պրոֆմարմիններում դաղտնի փաստաթղթերի իրավունքով:

Ընտրական բյուլլետենները պահվում են՝

ա) պրոֆիմբկազմակերպիչների, ցեխկոմների, ֆաբրիկա-գործարանային և տեղական կոմիտեների ընտրությունների վերաբերյալ— 3 ամիս.

բ) Մարզկոմների, յերկրկոմների, հանրապետական կոմիտեների ընտրությունների վերաբերյալ 4 ամիս:

գ) Նշված ժամկետներն անցնելուց հետո ընտրական բյուլլետենները պետք է այրել, վորի մասին կազմվում է արձանագրություն 3 օրինակից, համապատասխան պրոֆմարմնի անդամի և վերստուգիչ հանձնաժողովի ստորագրությամբ: Արձանագրությունները պետք է պահվեն համապատասխան պրոֆմարմիններում դաղտնի փաստաթղթերի իրավունքով:

ՀՍՍՀ-ԿԳԱ
Ա. Ա. Մելիքյան
ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

ՀՀ Ազգային գրադարան
NL0204134

251